

խուր մտորումներ, որ բաւական ժամանակ չարհարեցին Հէրցլի մշտաւոյոյ ուղեղը...

Եւ ահա ճիշդ ինչպէս որ ռուսական փօլ-բոմներու ազդեցութեան տակ Պինսկէր դրած էր 1881-ին իր համբաւաւոր «Ինքնադատումը» (Auto-e'mantipation) գրքովը, այնպէս ալ Հէրցլ՝ Տրէյֆլուի դատին ազդեցութեան տակ զրի տուաւ իր գաղափարները: Բայց երբ կարգը տեսականէն դործնականի անցնելու եկած էր, Պինսկէր մնացած էր անձաւոր իր ամբողջ դործն եղած էր «Սիոնի Սիրահարները» խրախուսել եւ զանոնք Պաղեստին զրկել...

Հէրցլ խորհեցաւ, թէ առանց պետական կորիզ մը կազմելու եւ երկրամաս մը ապահովելու ոեւէ գաղթականական հոսանք դատապարտուած է վիժելու եւ վարկարեկելու մեծ գաղափարը: Ան իր ամբողջ կեանքը նուիրեց այդ գաղափարի իրականացման, որուն ի ըստ պատ դրաւ իր ամբողջ հետեորական, քաղաքադիտական եւ գրագիտական հանձնարը:

Հայրենիքի գետեղման համար երկընտրանք չկար: Պաղեստինն էր այն երկիրն, ուր հրէան կրնար երթալ կարօտով ու սիրով: Պաղեստին թուրքերոյ տիրապետութեան տակ էր, եւ Հէրցլ զիմումներ ըրաւ Պալին, Սուլթանին եւ կայսեր, միջոց մը գտնելու համար: Կապ-մակերպեց հրէական ազգային համագումարներ, որոնք պարբերաբար գումարուեցան եւրոպական ալլեւայլ մայրաքաղաքներու մէջ, եւ հրէայ հարուստներ մեծկազմ գրամագլուխներ զրին անոր տրամադրութեան տակ... Ի դուր իր բոլոր զիմումներն եւրոպական բոլոր զիւանատուններն ոեւէ զրական արդիւնքի չյանգեցան:

Պարոն Խոմոն Ռօշիլա, հակառակ իր ընտանիքի անդամներու ընդդիմութեան, արդէն բաւական մեծ զոհողութիւններ ըրած էր եւ կը շարունակէր տակաւին ընել «Սիոնի Սիրահարները» հաստատուն գաղութին, որ առանց այդ օգնութեան պիտի բնաջնջուէր ապահովաբար, չկարողանալով զիմադրել հազարաւոր դժուարութեանց: Պարոն Հիւր իր կարծէր, թէ Պաղեստինի հողն ի վիճակի չէ Ժողովուրդ մը կերակրելու եւ աղքատ հրէաներուն կ'օգնէր Արժանթին երթալու:

Սուլթան Համիտ սիրով ընդունեց Հէրցլը եւ անոր նուիրեց փողկապի ազամանդեայ դրնդանդ մը, բայց հազդուեցաւ անոր շատ դրական առաջարկներէն՝ դրամով Պաղեստինը գնելու եւ օսմանեան վեհապետութեան տակ ինքնավար նահանգ մը կազմելու: Հէրցլ չյուսահատեցաւ եւ զիմեց Անգլիոյ, որ իրեն առաջարկեց Ուզանդայի նահանգը արեւելեան Աֆրիկէի մէջ, Նեղոսի վերին մասին վրայ: Հէրցլ շատ տարօրինակ չգտաւ առաջարկը, բայց հրէաները պիտի ուզէին խափշիկներու քով բնակիլ: Իր բոլոր կուսակիցները լքեցին զինք եւ յուսահատութենէ ու վշտէ յոգնարեկ Հէրցլ կնքեց իր մահականացուն դեռ երկուստարդ հասակի մէջ:

Թափուած աշխատանքը սակայն բոլորովին ի դուր չէր անցած: Հրէաներու մէջ ստեղծուած էր լուրջ հոսանք մը՝ ի նպաստ հայրենիքի մը կամ հաւաքատեղիի մը անհրաժեշտութեան: Հէրցլի հաստատած հրէական համաժողովը կը շարունակէր պարբերաբար դուրս գալ, եւ հայրենիքի խնդիրը միշտ օրուան հրատապ հարցերէն էր:

ՀՐԷԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՆԸ

Երբ 1914-ին ծագեցաւ մեծ պատերազմը, Դաշնակիցներու ծրագրին մէջ նշանակուեցաւ հալածուած փոքր ազգերու ազատագրութիւնը: Հրէական համագումարն իր պահանջը դրաւ վճռականօրէն: Հրէաներն ալ հալածուած չէին երկու հազար տարիներէ ի վեր...

Անգլիան իր ծրագրերներուն համապատասխան գտաւ այս առաջարկը եւ որդեգրեց զայն անմիջապէս: Սուէզի ջրանցքի պաշտպանութիւնն ու Հնդկաստանի ճամբան կ'ապահովուէին Փրանսական ոսնձգութեանց դէմ:

Դեռ պատերազմը չվերջացած Պալէստին յայտաբարեց պաշտօնապէս, թէ Պաղեստին պիտի կազմէ հրէական ազգային տունը, բրիտանական մանտայի տակ: Հայրենասէր հրէաներու փափաքը վերջնականապէս կատարուած չէր եւ իր նախահայրերու երկիրը վերադառնալէ վերջ ալ տակաւին Իսրայէլ օտարական պիտի նկատուէր եւ ինք, որ աշխարհին տուած էր մեծ զիւանագէտներ, սեղանաւորներ, հրապարակագիրներ եւ փիլիսոփաներ, կարող